ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

12 ՄԱՅԻՍԻ 2021 թ.

№ 6 (1070)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 56-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ, ՈՉԻՆՉ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ

ԼՐԱՑԱՎ Մեծ հայրենականում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 76-րդ տարին, հաղթանակ, որում մեծ է հայ ժողովրդի փառավոր ներդրումը: Տարիների հեռվից ոչինչ չի մոռացվել, և անցյալի հերոսական դասերն այսօր առավել քան պետք են մեզ՝ ապրողներիս:

Այս տարվա Մայիսի 9-ը տարբերվում էր նախորդներից. պատճառը տոնական տրամադրության և մայիսյան եռատոնով հպարտանալու զգացողությունների բացակայությունն էր:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները վաղ առավոտյան, համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի գլխավորությամբ, ծաղկեպսակ դրեցին ՀՊՄՀ-ից Արցախի առաջին պատերազմում զոհված աշխատակիցների հիշատակին նվիրված հուշաքարի մոտ, ապա այցելեցին Հաղթանակի զբոսայգի, ուր ծաղկեպսակ դրեցին անմար կրակի մոտ՝ հարգանքի տուրք մատուցելով Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին:

Ցավոք, Մեծ հայրենական պատերազմի վետերանների շարքերը գնալով նոսրանում են: Տարիներ առաջ դեպի Հաղթանակի հուշահամալիր համալսարանականների երթում օրվա հերոսները բուհում աշխատող պատերազմի վետերաններն էին, և երթը մի առանձնահատուկ շուք էր ստանում նրանց կրծքերին շողացող շքանշանների առատությունից: Համալսարանի՝ Հայրենական պատերազմի մասնակիցներն այսօր արդեն հիշողություն են դարձել, նրանց մասին պատմություններով դաստիարակվող սերունդը շարունակում է ապրել հայրենասիրության դասերով: Փառք ու պատիվ բոլոր նրանց, ովքեր խիզախորեն պայքարեցին Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ իրենց կյանքի ու սխրանքների գնով մոտեցնելով բաղձալի հաղթանակը:

Վստահ ենք, որ այսօրվա սերունդը պատրաստ է կրկնել հայրերի ու պապերի սխրանքը. Դա բազմիցս է ապացուցվել: Նաև վստահ ենք, որ համախմբվելով միասնականության ու հայրենիքի հզորացման գաղափարի շուրջ, մենք կվերականգնենք մեր մայիսյան հաղթանակների փառքը: Արցախյան 44-օրյա պատերազմի զոհերի հիշատակը մեզ պարտավորեցնում է...

«Ես երջանիկ մարդ եմ, որովհետև եղել եմ ա՛յն մարտիկների հրամանատարը, ովքեր ինքնակամ, առանց վարանելու գնում էին մարտի: Հրամանատարը պետք է պարտադրի, պետք է հրամայի, եթե հարկ է, նաև ուժով ստիպի, բայց այդ օրերին դրա մասին խոսելն անգամ ավելորդ էր, որովհետև այնքան ոգեղեցություն կար Շուշին գրոհելու պատրաստ մեր տղաների մեջ: Այդ երևույթը հիացրել ու մինչ օրս շարունակում է հիացնել ինձ: Ես խոնարհվում եմ այդ մեծ ոգու առջև, այն ոգու, որ ուներ մեր զինվորը»:

Արկադի ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Եթե ուզում ես վրեժ լուծել, թուրքերի քթի տակ ստեղծիր ուժեղ, բարեկեցիկ, օրինապահ երկիր, որտեղից մարդ չուզենա հեռանալ:

Պերճ Զեյթունցյան

Մեր հայրենիքում մեզ սպանեցին, բայց հայրենիքը մեր մեջ չսպանվեց:

Պարույր ՍԵՎԱԿ

Կա մի բան, որ աշխարհի զանազան ծայրերից կարող է միավորել հայերին հոգով, մտքով և արյունով, այն է՝ ազգային սերը:

Ռաֆֆի

Երթ՝ ի հիշատակ Ցեղասպանության զոհերի

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողներն ապրիլի 24-ին այցելեցին Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր:

Երթի մասնակիցները Ծիծեռնակաբերդի բարձունքում ծաղկեպսակ դրեցին, ծաղիկներ խոնարհեցին Հայոց Մեծ եղեռնի հուշարձանին, իրենց հարգանքի տուրքը մատուցեցին և մեկ րոպե լռությամբ հարգեցին մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը:

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանի կարծիքով՝պետք չէ կենտրոնանալ միայն Ցեղասպանության ճանաչման վրա. ճանաչումն ու հետևանքների վերացումը պետք է դիտարկել փոխկապակցված:

Նա կարևոր է համարում այն, որ հայերը նույնպես դասեր քաղեն սեփական պատմությունից և չկրկնեն սխալները, իսկ ցեղասպան պետությունը պետք է առերեսվի սեփական պատմության հետ: Վերջինս նաև նկատեց՝ չնայած 106 տարի է անցել, սակայն ապագա մանկավարժների տարբեր սերունդներ վառ են պահում պատմական հիշողությունը և ունեն վստահություն, որ պետք է շարունակել աշխատել աշխարհին մոլորության մեջ գցելու փորձերի դեմ ու լինել պահանջատեր: Մանկավարժական համալսարանի դասախոսներն ու ուսանողները ամենատարբեր ձեռնարկների միջոցով հանդես են գալիս Հայոց ցեղասպանության ճանաչման և արդարության կոչերով, որ չդատապարտված ցեղասպանությունը չծնի նոր ցեղասպանություններ:

ՆՈՐՕՐՅԱ ԹԵՀԼԻՐՅԱՆՆԵՐ

Մանկավարժական համալսարանի հմ. 57 հիմնական դպրոցի 5-7-րդ դասարանների աշակերտները ապրիլի 28-ին ներկայացրին Հայոց ցեղասպանության թեմայով գրական-երաժշտական կոմպոզիցիա՝ «Նորօրյա թեհլիրյաններ» խորագրով:

Հայոց պանդխտությունը խորհրդանշող կռունկի երգով դպրոցականներն ազդարարեցին միջոցառման մուտքը.

Կռո՛ւնկ, ուստի՞ կուգաս,
Ծառա եմ ձայնիդ...

Ապա ներկայացրին Սողոմոն-Կոմիտասի՝ եղեռնազարկ եղած հայի կերպարը.

Թե մինչև հիմա որտեղ որ երգն էր՝
Այնտեղ էլ նա էր,
Այսուհետ արդեն որտեղ որ նա էր՝
Այնտեղ էր երգը...

Անուշ Բարեղամյանի խմբավարմամբ հնչեցին կոմիտասյան երգեր՝ ներկաներին պարուրելով հայ երգի ու մեղեդու անզուգական ելևէջներով:

Դպրոցականները հմտորեն ներկայացրին գերմանական քաղաքի մի փողոցում հայ վրիժառու Սողոմոն Թեհլիրյանի կողմից Թալեաթի սպանությունը, որին հետևեց վրիժառուի դատավարությունը. «Ես մարդ եմ սպանել, բայց մարդասպան չեմ...»:

Պարույր Սևակի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Գրիգոր Զոհրապի խոսքերով դպրոցականները հավաստեցին, որ հայ մարդը հավերժի ճամփորդ է, ոչ մի ուժ չի կարող երկրի և քարտեզի երեսից վերացնել արարող ու աստվածային հայ ժողովրդին.

Մենք քիչ ենք,
Սակայն մեզ հայ են ասում...

Սևակի բանաստեղծությունը ներկայացնող աղջնակի աչքերից լույս էր ճառագում, իսկ շուրթերով խոսում էր հայ ժողովուրդը՝

Կա՛նք, պիտի լինենք ու դեռ շատանա՛նք...

Միջոցառումն ավարտվեց «Ապրելու ապրիլ» երգով, որն այնքան լավ կատարեցին դպրոցականները, այնքան դրական ապրումներ ու զգացողություններ փոխանցեցին սրահում ներկա գտնվողներին:

Հուզված էին դպրոցականները, հուզված էին բոլորը... Ալեքսի ձայնը, Ռաֆայելի անցկացրած դատավարությունը, Սողոմոն Թեհլիրյանի դերակատար տղայի ինքնավստահ կեցվածքը դեռ երկար կմնան ուսուցիչների, ծնողների ու հյուրերի հիշողության մեջ:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը երեխաներին վստահեցրեց. «Լավ է լինելու, թեև մեզ հիմա էլ փորձեցին կոտորել, ցեղասպանել, բայց մենք առաքելություն ունենք՝ ապրել և պայքարել Հայրենիքի համար, օրհասական պահերին դառնալ նրա վրիժառուն, կռվել ու պաշտպանել հող հայրենին: Այո՛, չենք ներելու, պիտի հաղթենք ու հաջորդ հանդիպումը լինելու է այդ հաղթանակի երգերով»:

Միջոցառումը բեմադրած ուսուցիչներ Մերի Սեփոյանի և Անուշ Արսենյանի ջանքերի շնորհիվ դպրոցականները թերթեցին մեր պատմության ծանր ու եղերական էջերը՝ հավատալով հայ ժողովրդի հարատևման հավերժական երթին:

Միլվա ԱՍՐՅԱՆ



ԽԱՉՔԱՐ

Տատասկների, քարերի մեջ,
Քամիների, արևի մեջ,
Ձյուների մեջ, շոգ ու տոթի,
Այսպես մենակ, այսպես ոտի,
Այսպես խոնարհ, այսպես
ըմբոստ,
Այսպես փխրուն, այսպես
շիտակ,
Այսպես խրթին ու այսպես
պարզ
Կանգնել է նա երկնքի տակ...
Կանգնել է նա արևի դեմ,
Որպես թախիծ ու խղճի սյուն,
Կանգնել է նա դարերի դեմ
Որպես խաչված
գեղեցկություն...

ՎԱՀԱԳՆ
ԴԱՎԹՅԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետն իր մասնագիտական դասախոսությունների շարքով հյուրընկալել էր Ֆրանսիայի Լիոն քաղաքի նյարդաբանական կլինիկայի ֆրանսահայ լոգոպեդ Աստղիկ Թոփուզխանյանին, ով 10-օրյա բարեգործական այցով Հայաստանում է՝ վիրավոր զինվորների հետ խորհրդատվություններ անցկացնելու նպատակով:

Մասնագիտական դասախոսության շրջանակներում ֆրանսահայ լոգոպեդը ներկայացրեց Ֆրանսիայում լոգոպեդի դերի և լոգոպեդական ծառայությունների կարևորությունը, բժիշկների հետ համագործակցության ուղիներն ու լայն հնարավորությունները, անդրադարձավ ոլորտի նորագույն միջոցների, մեթոդների ու մոտեցումների կիրառմանը:

Ներկաների համար դասախոսությունն անչափ արդիական ու կարևոր էր. ներկայացվող մեթոդների կիրառումը կարող է լուծել պատերազմի հետևանքով բազմաթիվ խոսքային խանգարումներ ձեռք բերած երիտասարդների մի շարք խնդիրներ, որի շուրջ Աստղիկ Թոփուզխանյանի, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների միջև ծավալվեց մասնագիտական քննարկում:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանը դասախոսների և ուսանողների անունից իր երախտագիտությունը հայտնեց հյուրին՝ մասնագիտական դասախոսության, մի շարք խնդիրների վերաբերյալ ֆրանսիական ժամանակակից փորձն ու մոտեցումները ներկայացնելու համար:

ՊԵՏՔ Է ԴԱՍԵՐ ՔԱՂԵԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կարևորելով հայերի ինքնապաշտպանական մարտերը ցեղասպանության օրերին՝ Հայաստանի Պատմության թանգարանը կազմակերպել էր ցերեկույթ-դասախոսություն՝ «Վանի ինքնապաշտպանական մարտերը, դրանց դերն ու նշանակությունը» թեմայով: Դասախոսության ունկնդիրները հիմնականում ուսանողներ էին: Դասախոսությամբ հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն շրջանի գիտաշխատող Համո Սուքիասյանը: Դասախոսությունը նվիրված էր Հայոց Մեծ եղեռնի 106-ամյակին: Բանախոսը ներկայացրեց Վանում տիրող իրավիճակը 20-րդ դարասկզբին: Այդ շրջանում Վանի ինքնապաշտպանությունը ծավալվում էր հայկական երկու խոշոր թաղամասերում՝ Այգեստանում և Քաղաքամեջում: Դրանք իրարից հեռու էին, բաժանվում էին թուրքական թաղամասով, ուստի կապ ստեղծելը դժվար և օրհասական խնդիր էր: Հանկարծակիի գալով՝ Վասպուրականի բնակիչներն առաջին օրերին շատ զոհեր են տալիս: Ինքնապաշտպանության նախաձեռնողը, ոգին ու ընդհանուր ղեկավարը դաշնակցական նշանավոր գործիչ, հետագայում Հայաստանի ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանն էր: Հայերն ունեին մոտ 1.500 հրացան և ատրճանակ: Վանի նահանգապետ Ջևդեթը հայկական թաղամասերի դեմ կենտրոնացրել էր 12.000 զինվոր, որոնց միացավ թուրք և քուրդ խուժանը: Այգեստանում Զինվորական մարմնի ղեկավար դարձավ Արմենակ Եկարյանը, իսկ Քաղաքամեջում՝ Հայկակ Կոսոյանը: Մարտերը սկսվեցին 1915թ. ապրիլի 7-ին: Թուրքերը, չնայած թնդանոթների առկայությանը, այդպես էլ չկարողացան գրավել հայկական դիրքերը: Վանեցիները հաջող հակագրոհներ կազմակերպեցին և այրեցին կառավարական մի շարք հաստատություններ ու զորանոցներ: Մայիսի 3-ին թուրքական զորքերը հեռացան քաղաքից, իսկ երկու օրից Վան հասան հայ կամավորական ջոկատները, ապա՝ ռուսական բանակը, հնարավորություն տալով հայ բնակչությանը հեռանալ:

Հերոսական պայքարի շնորհիվ մոտ 150.000-200.000 վասպուրականցիներ ազատվեցին թուրքական յաթաղանից: Ստեղծվեց Վանի հայկական նահանգապետությունը: Ավելի ուշ թուրք ասկյարները վանեցիներից վրեժը լուծեցին դեպի Պարսկաստան արտագաղթի ճանապարհին՝ կոտորելով բազմաթիվ մարդկանց:

Վանի ինքնապաշտպանական մարտերը կազմակերպել էին հայկական երեք կուսակցությունները՝ մի կողմ դնելով իրենց տարաձայնությունները:

Բանախոս Համո Սուքիասյանը շեշտեց, որ պետք է պատմությունից դասեր քաղել և համախմբվել՝ լավ արդյունքի հասնելու համար:

Սիմոն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՊՄՀ լրագրության բաժնի 1-ին կուրս

ԱՎԱՐՏԵԼՈՒ ՀԵՏԻՆ

Ես ՀՊՄՀ-ում եմ ապրել իմ կյանքի ամենաքաղցր ու ամենապատասխանատու չորս տարիները. տարիներ, որոնք, լցված լինելով ձեռքբերումների ու կորուստների, հաջողությունների ու խոչընդոտների, պարտությունների ու հաղթանակների էջերով, ինձ տվել են հարթակ, որտեղ ես ինքնադրսևորվել եմ տարբեր կողմերով, միշտ ինքնաբուխ և միշտ հետևողական:

Հիմա, երբ պահն է մոտենում՝ թերթելու ուսանողական օրերն ու վերհուշի ձևով զգալու ամեն մի օրը, ուզում եմ ակամա դադարեցնել ժամանակը, թեև գիտեմ, որ ամեն մի ավարտ սկիզբ է ինչ-որ նորի:

Ու չնայած որ շատ լավ հիշում եմ, թե ե՛րբ և ինչպե՛ս առաջին հայտով դիմեցի ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետ, հրաշալի հանձնեցի բոլոր քննությունները, սովորեցի ուսուցման անվճար համակարգում, եղա կուրսի ավագ, իմ շուրջը համախմբեցի գաղափարկից ընկերների, վայելեցի դասախոսներիս ջերմ վերաբերմունքը, 3-րդ և 4-րդ կուրսերում ինձ փորձեցի գիտության ոլորտում ու մասնակցեցի շատ տարբեր գիտաժողովների, որոնցից երկուսը՝ միջազգային, չեմ կարող չնշել այն մարդկանց, որոնք իրենց անփոխարինելի ձեռագիրն են թողել իմ անձի կայացման ճանապարհին:

Հիմա ժամանակն է եկել, որ շնորհակալություն հայտնեմ բուհին, ֆակուլտետին ու բոլոր այն մարդկանց, որոնք հավատացել են իմ հաջողությանը, որոնք անկախ ամեն ինչից, ոգևորել են ինձ ու արել այնպես, որ հասնեմ ու ձգտեմ ավելիին:

Չեմ կարող մոռանալ ֆակուլտետի պրոֆեսորական կազմին և հպարտորեն չնշել, որ նրանցից յուրաքանչյուրն իմ անձի զարգացման գործում ունեցել է իր դերը: Պրոֆեսոր Ալելիտա Դոլուխանյանը հավատացել է իր ուսանողին. նա ինձ համար եղել է հայ կնոջ կատարելատիպ:

Պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը մեզ հաղորդակից է դարձրել լեզվաբանական մտքին, արել այնպես, որ պատկերացնենք լեզվի զարգացումը և լեզուն որպես մտածողության արդյունք:

Պրոֆ. Սուրեն Դանիելյանը մեզ տվել է գիտելիքներով ինքնադրսևորվելու անծայրածիր հարթակ գրականությունից բացի՝ սովորել ենք վստահ կեցվածք և աշխատասիրություն. նրա դասերն արդեն կարոտով եմ հիշում:

Պրոֆ. Լալիկ Խաչատրյանը բաց է արել լեզվաբանության աշխարհը, լեզուն՝ իր հետաքրքիր գիտակարգերով, մեզ տվել լեզվամտածողություն, քննական միտք և մղել հետևողական աշխատանքի. նրա դասերին ինձ համար նորովի էր բացվում լեզվաբանությունը և այդ գրավիչ աշխարհը՝ ուսմունքներով և նորագույն ուղղություններով:

Շնորհակալ եմ ինձ երբևէ դասավանդած բոլոր դասախոսներին, բայց չեմ կարող չառանձնացնել, օրինակ, իմ սիրելի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Գրետա Հակոբյանին, ով տարիների ընթացքում ինձ համար ուղղակի դասախոսից դարձել է հարազատ մարդ. նա, մանկավարժությունից բացի, սովորեցրել է ինձ հավատալ իմ ուժերին ու շարժվել առաջ:

Ես ուրախ եմ, որ եղել եմ իմ գիտական ղեկավարի՝ բ.գ.թ. դոցենտ Աշխեն Յուզբաշյանի ուսանողը: Ուզում եմ հայտնել նրան իմ խորին հարգանքը՝ ավարտական աշխատանքի բոլոր փուլերում իր հետևողական և ջերմ մոտեցման համար: Նրան հայտնել իմ շնորհակալությունը՝ ինձ հավատալու, թեմայի ընտրության հարցում իմ հետաքրքրությունների շրջանակը հաշվի առնելու և պարզապես շատ ծանրաբեռնված, բայց միաժամանակ շատ թանկ տարիների համար, երբ ամեն օր արթնանում էի՝ իմ մեջ մի նոր որակներ հայտնաբերած: Երբ ասում եմ Աշխեն Յուզբաշյան, մտաբերում եմ այս բառերը՝ մոտիվացիա, մոտիվացիա, մոտիվացիա...

Շնորհակալ եմ Տիգրան Սիմյանին և Ինա Սարկիսյանին. առանց սքողելու՝ գրականության տեսությունն ու արտասահմանյան գրականությունը ինձ հոգեհարազատ են դարձել հե?նց նրանց շնորհիվ:

Առաջիկայում ավարտական աշխատանքների պաշտպանությունն է: Յուրաքանչյուր ուսանողի համար ավարտական ելույթը շատ պատասխանատու և կարևոր պահ է, մի իրադարձություն, որին պետք է մոտենալ լրջորեն և դրական տրամադրված: Ներքին հանգստությունն ինձ ուղեկցել է նաև նախապաշտպանության ժամանակ, իսկ ներքին ձայնն ինձ հուշում է, որ մենք արժանվույնս կներկայանանք ավարտական աշխատանքների պաշտպանությանը՝ գրանցելով վաստակած արդյունքներ:

Հիմա չգիտեմ, թե կյանքի երթուղին ուր կտանի ինձ, որ կանգառում կանգ կառնի և ինչպես, սակայն վստահ եմ, որ ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի այս չորս տարիները կմնան իմ հուշերում՝ չխամրելով երբեք: Ազատություն սիրողի համար բանասիրականը լավագույն հարթակն ու միջավայրն է:

Կարլեն ՆԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 4-րդ կուրս

Սիրելի՛ դիմորդ, եթե կարդում ես

Երբ դեռ բուհ չես ընդունվել, բոլորն ասում են, որ ուսանողական տարիները լավագույնն են կյանքում: Երբ ընդունվում ես բուհ, հասկանում ես, որ դրանք կարող են լավագույնը լինել, եթե դու, հենց դու ես այդպես ցանկանում: Ուսանողի կերպարը վերջին տարիներին շատ է փոխվել, ընդ որում տարեցտարի ինչ-որ մի նոր բան ավելանում կամ պակասում է ուսանողի թվացյալ կերպարում, ոմանք ասում են լավ է, մյուսները՝ բողոքում նոր սերնդի նոր տեսակից: Մի մասն իր կյանքի բոլոր անհաջողությունները բարդում է բուհի վրա, մյուս մասը՝ մասնագիտության սխալ ընտրության, իսկ որոշները՝ հենց վերոնշյալ ուսանողի անպատրաստվածության վրա: Այնուամենայնիվ բուհից կարելի է վերցնել գոնե ցանկացածիդ կեսից ավելին, և եթե նույնիսկ համալսարանը քեզ չի ցանկանում ոչինչ տալ, համա?ռ եղիր: Մասնագետ դառնալը կարևոր է, և եթե սովորում ես, պիտի սովորես լավագույն կերպով, լավագույնի ձգտման համար, լավագույնը լինելու համար, որովհետև եթե ընտրել ես մանկավարժ դառնալու ուղին, ապա պիտի գիտակցես, որ կրթածդ սերունդը պիտի լավագույնը լինի՝ փայլուն մարդկային հատկանիշներով և հետո միայն փայլուն գիտելիքով: Ընդ որում՝ պիտի սովոր լինես նաև անկումներին, որովհետև լավագույնը լինել՝ չի նշանակում զերծ մնալ ձախողումներից: Մենք կերտում ենք մեզ մեր ունեցած հաջողությունների և ձախողումների ճանապարհից:

Կարծրացած միտք է այն գաղափարը, թե անհնար է գերազանց սովորել և միևնույն ժամանակ զբաղվել ակտիվ հասարակական գործունեությամբ: Եթե միտք ունես, ապա միանշանակ կարող ես հասցնել ամեն ինչ՝ և՝ գերազանց սովորել, և՝ մասնակցել տարատեսակ միջոցառումների, և՝ ստեղծել քո իսկ ծրագրերը, և՝ մասնակցել միջազգային ծրագրերի և ոչ միայն, պարզապես անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել օրը և արդյունավետ կառավարել ժամանակը: Այնպես որ, եթե որոշել ես ընդունվել բուհ և ուզում ես ունենալ խելահեղ ուսանողական տարիներ՝ մի? ծուլացիր, սովորիր և սովորեցրու, պատկերիր երազանքներդ՝ միշտ ընտրելով որակը, այլ ոչ թե անունը:

Տաթև ԱՐՇԱԿՅԱՆ
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ, 4-րդ կուրս

Վարպետաց դաս

«Ռեժիսուրան բնավորություն է, հավատամք, որ տարիների ընթացքում թրծվում է»,

-ասում է Սաթե ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի և Թատերական ինստիտուտի շրջանավարտ Սաթե Խաչատրյանը, ով նաև ավարտել է Ֆրանսիայի Թատերական արվեստի կոնսերվատորիան և Սորբոնի համալսարանը և ապրում է Ֆրանսիայում, Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակում այցելել է Հայաստան՝ իր բեմադրած «Սասնա ծռեր» էպոսը ներկայացնելու նաև հայ հանդիսատեսին: Ապրիլի 13-19-ը տարբեր երկրների դերասաններից կազմված խմբով արդեն բեմադրությունը ներկայացվել է Սևանում Գավառում, Գորիսում, Գյումրիում և Երևանում:

ՀՊՄՀ շրջանավարտը Կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի ամբիոնի դոցենտ Խաչիկ Չալիկյանի կուրսում անցկացրեց վարպետության դաս:

Սորբոնի համալսարանում Սաթեի պաշտպանության թեման եղել է ժամանակակից եվրոպական դրամատուրգիան: Նա իրեն ինքնահիրացնում է և՛ ռեժիսորի, և՛ դերասանի աշխատանքում, միաժամանակ բազմաթիվ թարգմանություններ է կատարել օտարերկրյա հեղինակներից:

Ուսանողների հետ նրա զրույցը իր ուսումնառության, հայ մշակույթը աշխարհին, մասնավորապես Ֆրանսիայի հանդիսատեսին ներկայացնելու, ինչպես նաև մշակույթների երկխոսության մասին էր:

Ուսանողների հետ հանդիպմանը նա խոսեց ժամանակակից թատրոնի խնդիրների, ռեժիսորի և դերասանի աշխատանքի, ինչպես նաև նրանց փոխհարաբերությունների մասին, պատասխանեց ուսանողների հարցերին:

Սաթեն իր թարգմանություններից առանձնացրեց աբսուրդի թատրոնի հիմնադիրներից մեկի՝ հայազգի Արթուր Ադամովի պիեսները և ասաց, որ շատ կուզենար վերոհիշյալ հեղինակի գործերը տեսնել ամբիոնի ուսումնական ծրագրերի մեջ:

Նա ապագա ռեժիսորների հետ խոսեց կոմերցիոն և այլընտրանքային թատրոնների խաղացանկերի, ժամանակակից թատրոնի, Ֆլորիան Զելլերի, Յասմին Ռեզայի և ուրիշների մասին՝ խորհուրդ տալով կարդալ նրանց գործերը՝ հասկանալու համար, թե ուր է գնում ժամանակակից թատրոնը:

Սաթեին դեպի բանասիրության ոլորտ ուղղորդել է ընտանիքը, որի համար նա շնորհակալ է իր ծնողներին: Թատերական ընդունվելու գաղափարը թեև չի խրախուսվել ընտանիքի կողմից, բայց ինքն ընտրեց դրամատուրգիան, որտեղ իրեն օգնում է թե՛ թատրոնը, և թե՛ գրականությունը:

Ուսանողների այն հարցին, թե ինչու թատրոն և ոչ կինո, նա պատասխանեց, որ թեև դրանք այսօր մերձենում են իրար, այնուամենայնիվ, իր համար դրանք տարբեր աշխարհներ են:

Ուսանողները հետաքրքրվեցին, թե Ֆրանսիայում ռեժիսուրան ընտրած ուսանողներն ինչ են անցնում, ինչ խնդիրների են հանդիպում:

«Ֆրանսիայում մեզ հիշեցրին, որ հեշտ ճանապարհ չենք ընտրել,- ասաց Սաթե Խաչատրյանը, -բայց յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում՝ ինչի է արժանի և մինչև ուր կարող է գնալ: Այսօրվա ուսանողներդ շահեկան վիճակում եք. աշխարհի տեղեկատվությունն այնքան հասանելի է, որ դրանք կարող եք օգտագործել ի շահ ձեզ, և այդ առումով ձեր մասնագիտական տեսլականը պետք է շատ բարձր լինի»:

Ուսանողներին դիմելով՝ նա ասաց. «Ձեր գաղափարները կարող եք դարձնել շոշափելի, եթե պատասխանատվություն կրեք ձեր անելիքների համար»:

Իր մի մասով ռեժիսոր, մի մասով էլ դերասան Սաթեն շատ է սիրում է դերասաններին, իսկ երբ ռեժիսորը տաղանդավոր է, դերասանների խաղը ստացվում է: Թատրոնում իր համար առաջնայինը դերասանն է: Այնպես որ ուսանողներն էլ ռեժիսոր դառնալու դեպքում պետք է սիրեն դերասաններին:

Ֆրանսիայում ամուսնու հետ հիմնադրել են թատրոն, որի խաղացանկում է հայկական էպոսը՝ «Սասնա ծռեր»-ը, որի մեջ Սաթեն Արմաղանի դերն է խաղում, իսկ տարբեր ազգությունների 6 դերասաններ, այդ թվում և սևամորթ, ներկայացնում են էպոսի մյուս հայ կերպարներին: Ներկայացումը երաժշտական է, և այն ներկայացնում են մերօրյա ասացողները: Հայ մշակույթի հանդիպում ֆրանսերեն լեզվի հետ՝ այսպես է բնորոշել էպոսի բեմադրությունը ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանը:

Ֆրանսիայում ներկայացրել են նաև Թումանյանի հեքիաթները և ֆրանսիացի հանդիսատեսին հաղորդակից են դարձրել հայկական գրական գոհարներին:

«Որպես գեղարվեստական բացառիկ գործ՝ փորձել եմ ցույց տալ, որ մեր էպոսը համամարդկային է և այն կարող են ներկայացնել տարբեր երկրների մարդիկ: Մեր գեղարվեստական ստեղծագործությունները պետք է հասանելի լինեն աշխարհին»:

Ինչ վերաբերում է կին և տղամարդ ռեժիսորներին, Սաթեն կարծում է, որ դրանք կապ չունեն լավ կամ վատ բեմադրությունների հետ, պարզապես ռեժիսորը պետք է տաղանդ ունենա: Նա հիշում է իր դասախոսի խոսքերը՝ ռեժիսուրան բնավորություն է, դա հավատամքի պես է, որը տարիների ընթացքում թրծվում է:

«Եթե ուզում եք իսկապես ռեժիսոր դառնալ, պետք է շատ աշխատեք»,- ասում է Սաթեն՝ ուսանողներին խորհուրդ տալով՝ երբեք սկսած գործը կիսատ չթողնել, լինել համառ, չհանձնվել, սիրել դերասաններին և փայփայել նրանց, գտնել ցանկացած խնդրի լուծում և այն վերածել հնարավորության:

Սաթե Խաչատրյանը վստահ է՝ ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի բաժնի ուսանողների համար իր վարպետության դասն անպայման օգտակար և ուսանելի կլինի:

«Իմ սեր, իմ Հայաստան...»

Ապրիլի 25-ին Հայաստանի ազգային պատկերասրահի Ալավերդու մասնաճյուղում բացվեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական լուսանկարչության բաժնի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսը՝ «Իմ սեր, իմ Հայաստան...» խորագրով, որը պատկերասրահում կմնա շուրջ մեկ ամիս:

Ուսանողների աշխատանքներից բացի ներկայացված էին նաև ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սամվել Սևադայի լուսանկարները:

Ցուցադրված լուսանկարներում Հայաստան աշխարհն էր՝ իր հրաշալի բնապատկերներով, պատմամշակութային հուշարձաններով և կյանքի ամենատարբեր դրվագներով:

Ալավերդու պատկերասրահի տնօրեն Ռաֆայել Ջավախյանը ցուցահանդեսի բացման առիթով շնորհավորեց Մանկավարժական համալսարանի դասախոսներին և ուսանողներին՝ փաստելով որ ալավերդցի հանդիսատեսին ներկայացվել են արվեստի հաջողված գործեր են:

«Եվ ուրախալի է, որ մեր աշխատանքներն արդեն արժանի են ներկայացվելու այլ մարդկանց ուշադրությանը: Ցուցահանդեսը Հայաստանի տարբեր վայրերում ներկայացնելը նաև պարտավորեցնող է, որ ավելի շատ սովորենք ու աշխատենք, որպեսզի կարողանանք ավելի շատ հիացմունք պարգևել մեր արվեստասերներին»,- ասաց Մանկավարժական համալսարանի գեղարվեստական լուսանկարչության բաժնի ուսանող Մոնիկա Նահապետյանը:

«Չկա մի չափանիշ, որին հասնելուց հետո ասես՝ վե՛րջ, բավական է: Պետք է անդադար աշխատել, սովորել, գտնել և կանգ չառնել»,- ասաց ցուցահանդեսին ներկա ուսանողներից Լիանա Բալասյանը: Նա ծնունդով լոռեցի է և մեծ պատիվ է համարում ծննդավայրում իր աշխատանքները ներկայացնելը:

ՀՊՄՀ Գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռուբեն Երզնկյանը փաստեց, որ մեծ պատասխանատվությամբ են պատրաստվել Ալավերդիում բացվելիք ցուցահանդեսին. «Թեպետ Լոռիում չեմ ծնվել, բայց ինձ լոռեցի եմ համարում: Ինձ համար Ալավերդին և տեղի հանդիսատեսը միշտ տարբերվել են: Այս ցուցահանդեսը Գյումրիից հետո այստեղ ենք բերել, իսկ ընդհանրապես ցուցահանդեսներ ենք ունեցել Շուշիում, Գորիսում, Երևանում, Վանաձորում այլ քաղաքներում: Շրջում ենք տարբեր մարզերով ու կարծես հաշվետվություն ներկայացնում, որպեսզի մարզի բնակիչներն էլ իմանան, թե ինչ է կատարվում այս ոլորտում: Բացի այդ, գուցե լինեն երիտասարդներ, որոնք կցանկանան սովորել, գեղարվեստական լուսանկարիչ դառնալ և կգան մեր բուի՝ արդեն կրթություն ստանալու և մասնագետ դառնալու»,- ասում է Ռուբեն Երզնկյանը:

«Իմ սեր, իմ Հայաստան...» լուսանկարչական աշխատանքների ցուցահանդեսի բացման արարողության ավարտին Հայաստանի ազգային պատկերասրահի Ալավերդու մասնաճյուղի տնօրենի շնորհակալագրով պարգևատրվեցին Մանկավարժական համալսարանի 11 ուսանողներ, իսկ Ալավերդու համայնքապետի շնորհակալագրով՝ համալսարանի ռեկտորն ու դասախոսները:

ՆԱ ԱՊՐՈՒՄ ԷՐ ԱՊԱԳԱՅԻ ԵՐԱԶԱՆՔՆԵՐՈՎ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի շրջանավարտ, Արցախի երրորդ պատերազմում զոհված Ալեն Մարգարյանի մասին դժվար է անցյալով խոսել… Դահլիճում ներկա դասախոսները և ուսանողները, հերոսի հարազատները կինոէկրանին դիտեցին նախկինում բեմադրված ներկայացման մի տեսագրություն, որտեղ Ալենը խաղում էր գլխավոր դերը:

Հետաքրքիր էր բեմադրության թեման ու բովանդակությունը. ինքնաթիռի ուղևորները թռչում էին տիեզերք՝ նախապես կնքած պայմանագրով, որ եթե թուլություն ցուցաբերեն թռիչքի ընթացքում, այնտեղից չեն վերադառնա: Բայց Ալենի հերոսը սիրահարվեց կողքին նստած աղջկան, և ուրեմն վերադառնալու հույսը կորավ: Սա մի տարօրինակ էքսպերիմենտ էր օդում, ուր ինքնաթիռի ուղևորների մեջ ատելություն էր սերմանվում, իսկ Ալենի հերոսը սիրեց կողքին նստած աղջկան, սիրեց նրա նախասիրությունները, նրա ցավը…նաև օրինակ ծառայելով օդաչուին և ուղեկցորդուհուն, որոնք ներկայացման վերջում խոստովանեցին. «Մենք ոչինչ ենք առանց սիրո. Սիրեք և սիրված եղեք»… Ինչո՞ւ պետք է գնալ մի տեղ, որտեղից վերադարձ չկա…Եվ ինքնաթիռը վերադարձավ Երկիր մոլորակ:

«Կուլտուրայի ֆակուլտետում մշտապես մեծ հուզմունքով ենք բացել լսարաններ՝ բուհի անվանի դասախոսների և մշակույթի մեծ վարպետների անուններով: Ես որքան կուզեի, որ այսօր մեր սիրելի Ալեն Մարգարյանի անունով լսարանը բացեինք՝ ի նշան իր հրաշալի բեմադրությունների կամ նկարահանած ֆիլմերի: Ավա՜ղ չհասցրեց: Չհասցրեց ապրել հայ շնորհալի մարդու և ապագա լուրջ արվեստագետի կյանքը, չհասցրեց, մնաց մեր սրտերում: Հպարտությունն ու ցավը խառնվել են իրար, բայց մեզանում պետք է գերակշռի հպարտության զգացումը: Կուլտուրայի ֆակուլտետի 215 լսարանն այսուհետ կրելու է Արցախյան վերջին պատերազմի մասնակից, ռեժիսուրայի բաժնի շրջանավարտ Ալեն Մարգարյանի անունը՝ որպես հայրենասիրության պատգամ իր ընկերներին ու սերունդներին»,-անկեղծ հուզմունքով ասաց ֆակուլտետի դեկան Գևորգ Թադևոսյանը:

Ելույթ ունեցավ արցախյան առաջին հերոսամարտում զոհված Աշոտ Չախոյանի մայրը՝ Հանրային ռադիոյի հաղորդաշարի, «Ապրելու բանաձև» և այլ գրքերի հեղինակ Գոհար Մարտիկյանը: «Ես ուզում եմ գրչով սատարել բոլոր նրանց, ովքեր սիրում են իրենց հայրենիքը, հայ ընթերցողը պիտի հասկանա, թե ինչ է Հայաստան աշխարհը: Արցախյան պատերազմի հերոսներն անձնազոհաբար ընկան՝ ուրիշների կյանքը գեղեցկացնելու համար»:

Նա հորդորեց դահլիճում ներկա գտնվող երիտասարդներին՝ շատ երեխաներ ունենալ, որպեսզի «կարողանանք ստեղծել այն Հայաստանը, որի մասին բոլորս ենք երազում»:

Իր հեղինակած «Սա Հայաստանն է և վերջ» գիրքը Գոհար Մարտիկյանը նվիրեց Ալենի անվան արվեստանոցին՝ նոր ձևակերպումով՝ Արցախը Հայաստան է և վե՛րջ, իսկ «Ապրելու բանաձև» գիրքը՝ համալսարանի գրադարանին:

Կուրսի ղեկավար Հերբերտ Գասպարյանը հուզմունքից բառեր չէր գտնում՝ արտահայտելու իր ցավն ու ափսոսանքն այն երիտասարդի մասին, ում հետ երկար տարիներ աշխատել էր. «Ալենը զարմանալի ազնիվ էր, նման չէր ոչ մեկին: Նա լույս էր և երբ մտնում էր լսարան՝ իր հետ լույս էր բերում: Նա ստեղծում էր մի զարմանալի մթնոլորտ, այն երանելի մթնոլորտը, որը Չեխովն անվանում էր ստեղծագործական մթնոլորտ: Մենք միասին աշխատում էինք, և Ալենն ասում էր՝ ես ուզում եմ գիտությամբ գրավել աշխարհը…»:

Կուրսի ղեկավարն ափսոսաց, որ շուտով կբացվի Ալեն Մարգարյանի անվան լսարանը, որտեղ նրա ֆիլմը պետք է ցուցադրվեր: «Կարծում եմ ուսանողները պետք է օրինակ վերցնեն նրանից: Այդ լսարանում Ալենի ներկայությունը պետք է օրինակ ծառայի բոլոր այն ուսանողների համար, որոնք միայն գիտությամբ ու իմացությամբ են ուզում գրավել աշխարհը»,-ամփոփեց Հերբերտ Գասպարյանը:

Առավել քան հուզիչ էր Ալեն Մարգարյանի մոր՝ Նազելի Տերտերյանի խոսքը. «Անսահման դժվար է այսօր առանց հուզմունքի խոսել Ալենի մասին, մի երիտասարդ, որի ֆենոմենը դժվար է բացահայտել: 21 տարիների ընթացքում արձանագրել այդպիսի հաջողություններ, միայն բացառիկ երիտասարդը կարող է դրսևորել նման արժեհամակարգ: Նրան բնորոշ էին ազնվությունը, պարկեշտությունը, բացառիկ նվիրվածությունն իր ուսանն ու շրջապատի մարդկանց, «մարդու մեջ մարդը տեսնելու» սևակյան բանաձևը: Նա իր առջև դրել էր՝ «ո՞րն է աշխարհը փոխելու քո բանաձևը» հարցը, և իր վարքագծով ամեն ինչում ձգտում էր կատարյալին»:

Ես ուղղակի ներկայացնում եմ այն հավաքական կերպարը, որի մասին խոսում էին դասախոսները, կուրսընկերները, Ալենի հետ որևէ առնչություն ունեցած մարդիկ, ընկերներ, որոնց լուսավորել են Ալենի լուսավոր աչքերը…Նա կարծես Արև լիներ, որ իր շուրջը համախմբում էր մյուս համաստեղություններին: Նա հերոս էր իր վարքագծով. փայլուն ուսանող, լավ դասախոս, միաժամանակ սիրող եղբայր ու սիրասուն զավակ մեզ համար: Իր կարգապահությամբ, իր ճշմարտապահությամբ ամեն ինչ անում էր, որ հասնի կատարյալին, չէր կարողանում հանդուրժել միջակությունը, իր գերազանց ուսմամբ իսկական օրինակ էր մյուսների համար: Եվ պատահական չէ, որ ընտրել էր մանկավարժի մասնագիտությունը: Յուրաքանչյուր մարդ իր ծննդյան օրից առաքելություն ու կոչում ունի. գերազանցությամբ ավարտեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, դասավանդում էր «Թումո» կենտրոնում:

Նա բռնեց հավերժի ճամփան…: Պատերազմի ընթացքում նա ընկերոջն ասել էր. «Զգո՞ւմ ես նահվան շունչը…». Ալենն զգացել էր, որ մոտ է հավերժության ճանապարհը բռնելու ժամը…»:

«Նրանք այնքան ուժեղ էին հոգով, արի և առյուծասիրտ էին, որ մնացին դիրքերում: Ցավում եմ, որ սևազգեստ մայրերիի թիվն օրըստօրե մեծանում է: Թույլ չտաք, որ ժամանակը մոռանա հերոս տղաներին…»:

Ալենի մայրը շնորհակալություն հայտնեց Մանկավարժական համալսարանին և Կուլտուրայի ֆակուլտետին՝ որդու անունով արվեստանոց կոչելու համար՝ հավաստելով. «Նա ապրում էր գիտությամբ, կրթությամբ և ապագայի երազանքներով: Անիծվի՛ այն արհավիրքը, որ պատերազմ է կոչվում, և այն մարդիկ, որոնք չկանգնեցրին այն»:

Նա ելույթն ավարտեց որդու՝ պատգամ հիշեցնող բառերով. «Իսկ հիմա ավելի շատ սիրեք իրար»:

Կուլտուրայի ֆակուլտետի 215 լսարանն այսուհետև կկոչվի ֆակուլտետի շրջանավարտ Ալեն Մարգարյանի անվան արվեստանոց, ուր ուսանողների տարբեր սերունդները կստանան ոչ միայն մասնագիտական գիտելիքներ, այլև կսովորեն ինչպես ճիշտ և գեղեցիկ ապրել, ապրել այնպես, ինչպես ապրեց Ալեն անունով երիտասարդը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՄԵԾՆ ՇԻՐԱԶԻ ԱՂԹՔՈՎ ԾԱՎԱՑԱԾ ԿՅԱՆՔ



ԶԳԻՏԵՄ էլ ո՞վ, բայց գրի ու գիտության մարդը հանգիստ է անցնում իր տարիների շարքով: Եթե դրանք նույնիսկ մոտենում են «կարմիր գծին», ապա նրա մեջ խուճապ չի նկատվում: Եվ սա մի տեսակ մասնագիտական «արատ» է: Ի սկզբանե նվիրվելով գիտամանկավարժական գործին՝ մտավորականներից յուրաքանչյուրն ընդունում է իրեն հատուկ կենսակերպ, որի սկիզբն ու վերջը այնքան այնքան էլ չեն տարբերվում իրարից:

Խոսքը տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մաքսիմ Սարգսյանի մասին է, ում ծննդյան 85 և գիտամանկավարժական գործունեության 60-ամյակը լրացավ վերջերս:

Ծնվել է 1936 թ. Արցախում (Ստեփանակերտին մերձակա Բալուջա՝ պատմական Մեղրատափ գյուղում), ծառայողի ընտանիքում: Սովորել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում: 1953 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ: 1958 թ. ավարտելով համալսարանը՝ վերադառնում է Արցախ, որտեղ մի քանի տարի աշխատելուց հետո, 1962 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի առկա ասպիրանտուրա՝ «Քաղաքատնտեսություն» մասնագիտությամբ: 1967 թ. պաշտպանում է թեկնածուական, իսկ 1986 թ. դոկտորական ատենախոսություն, ստանում դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչումներ:

Մ. Սարգսյանն էական ավանդ ունի հայ տնտեսագիտության զարգացման գործում: Նրա գրչին են պատկանում գիտական մի քանի տասնյակ աշխատություններ (այդ թվում յոթ մենագրություն)՝ նվիրված սեփականության պահանջմունքների և կենսակերպի հիմնահարցերին (աշխատությունները հրապարակվել են ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն): Մ. Սարգսյանը չի շրջանցել նաև թարգմանչական աշխատանքը: Նկատի ունենալով մայրենի լեզվով ուսումնամեթոդական գրականության խիստ անհրաժեշտությունը՝ նա ձեռնարկում է թարգմանելու Գ. Կոզլովի խմբագրությամբ ռուսերեն հրատարակված «Քաղաքատնտեսություն» ծավալուն դասագիրքը, որ հայերեն լույս տեսավ 1973 թ.:

Իր գիտական մտահղացումները հասարակության առավել լայն շրջաններին փոխանցելու ակնկալությամբ պրոֆ. Մ. Սարգսյանը վերջին տասնամյակներին պարբերաբար հանդես է գալիս հանրապետական մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ:



Ավելի քան ընդգրկուն է Մ. Սարգսյանի մանկավարժական գործունեությունը: Այն սկսվում է 1963 թվականից: Շուրջ մեկ տասնամյակ Երևանի պետական համալսարանում, իսկ այնուհետև Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (որտեղ 2002-2014 թթ. ղեկավարել է տնտեսագիտության ամբիոնը) ուսուցանում է տնտեսագիտական գիտելիքներ:

Համատեղության կարգով գիտնականն աշխատանքի է հրավիրվել նաև հանրապետության այլ բուհեր: Բնականաբար Մ. Սարգսյանի ուշադրությունից չէր կարող դուրս մնալ Արցախի պետական համալսարանը, որի բացմանը մասնակցելով՝ նա արդեն իսկ հաջորդ օրը դասախոսական կազմի և ուսանողության առջև հանդես եկավ սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների մասին դասախոսությամբ, իսկ հետագայում կարդաց ամբողջական դասընթաց: Այս գրեթե 60-ամյա մանկավարժական գործունեության ծնունդն է երիտասարդ և միջին սերնդի բարձրագույն որակավորման մասնագետների մի ստվար բանակ, որն այսօր իր գործուն մասնակցությունն է բերում կրթության, գիտության, կառավարման և տնտեսության ամենատարբեր բնագավառներում:

Հարկ է նշել, որ բարձրագույն կրթության մասնագետների պատրաստման գործունեությամբ, Մ. Սարգսյանը դուրս է եկել զուտ պաշտոնավարության շրջանակներից: Տասնյակ տարիներ նա պետական քննական հանձնաժողովների նախագահ է եղել մի շարք բուհերում՝ տնտեսագիտական մասնագիտությունների գծով: Այս առումով նրա գործունեությունն ընդգրկում է նաև բարձրագույն որակավորման գիտական կադրերի պատրաստման բնագավառը: Տարբեր տարիների պրոֆեսոր Մ. Սարգսյանն անդամակցել է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի, Հայաստանի տնտեսագիտական և Խ. Աբովյանի անվան հայկական պետական համալսարանների մասնագիտական խորհուրդներին, նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել մի շարք ասպիրանտներ: Գիտնականը բազմիցս հանդես է եկել որպես թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս, իսկ նրա ղեկավարած ամբիոնը՝ որպես առաջատար կազմակերպություն: Բարձրագույն որակավորման կադրերի պատրաստման տեսակետից հատկապես արգասաբեր էր Մ. Սարգսյանի 16-ամյա փորձագիտական գործունեությունը ՀՀ ԲՈՀ-ում:

Մաքսիմ Սարգսյանը եռանդուն հասարակական գործիչ է, ինչը առավել տեսանելի էր հատկապես վերջին տասնամյակներում, երբ հրատապ դարձան հայրենի եզերքի սոցիալ-քաղաքական հիմնահարցերը: Արցախյան շարժման սկզբից 1980-ականների 2-րդ կեսից, լինելով մասնագիտական հարցերով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հայ պատգամավորների խորհրդական, Մ. Սարգսյանը նրանց նյութեր էր տրամադրում նաև Արցախի իրադրության մասին: Այս տեսակետից հատկապես ուշագրավ է Լեռնային Ղարաբաղի վիճվարչության տվյալների հիման վրա նրա կազմած վերլուծական ընդարձակ «Տեղեկանքը» Արցախի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, որն օգտագործվեց հայ պատգամավորների մի շարք ելույթներում և ամբողջությամբ ներկայացվեց Գերագույն խորհրդի նախագահության քննարկմանը: Իսկ երբ սկսվեց Արցախի առաջին պատերազմը, Արցախին արդեն գործնական և համակողմանի օգնություն էր անհրաժեշտ: Այդ նպատակով 1990 թ. սկզբին Մ. Սարգսյանը Երևանում հիմնադրում է «Մեղրագետ» հայրենակցական միությունը, որը նրա ղեկավարությամբ արցախյան պատերազմի ամբողջ ընթացքում համակարգված նյութական օգնություն է ցույց տվել ճակատին զենք, զինամթերք, ֆինանսական միջոցներ), զոհվածների, բազմանդամ ու կարիքավոր ընտանիքներին, վիրավորներին և այլն: Միությունը տեղում հետաքրքրվում էր հայրենակիցների հոգսերով, կատարում պարենի և վառելիքի մատակարարումներ, ինչպես նաև սոցիալական որոշ օբյեկտների շինարարություն (ի դեպ, պատերազմից հետո էլ Մ. Սարգսյանը բարեգործական աշխատանք է կատարում Արցախում, մասամբ Երևանում): Առաջին պատերազմի տարիներին նա հաճախ էր լինում ճակատային գծում, իր հայրենասիրական զրույցներով և ելույթներով ոգեշնչում զինվորներին, իսկ վերադարձին մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ հանդես գալիս ճակատի և թիկունքի մարդկանց սխրանքները պատկերող հոդվածներով ու հաղորդումներով:

Մ. Սարգսյանը Հայաստանի Հանրապետության ազատամարտի վետերանների միության և նրա քաղաքական խորհրդի անդամ է:

Պրոֆեսոր Մ. Սարգսյանի բազմաբնույթ գործունեությունն անուշադրության չի մատնվել. պարգևատրվել է 8 մեդալով (որից 4-ը՝ մարտական) և կառավարության բազմաթիվ պատվոգրերով: Հարազատ բուհում երախտագիտությամբ կերտվել է նրա դիմաքանդակը (քանդակագործ՝ Միսաք Մելքոնյան):

Այո, ապրում է մարդն իր տարաբնույթ գործերով՝ մտքով անգամ չանցկացնելով չապրելու տարբերակը, Աստծո մտադրությանն անտեղյակ: Մի առիթով ասաց, թե ճիշտ ապրելու դեպքում ամեն տարիք ունի իր հետաքրքրությունն ու խորհուրդը, և դա, հատկապես, կրթության և գիտության մարդու համար, որն ամբողջ կյանքում պատրաստվում է ապրելու: Նման մարդկանց դժվար է ամփոփվել 85 տարիների մեջ: Եվ եթե Աստված խանդոտ չէ, ու ինքն էլ ունի Աստված, չի շտապի մտածել ավարտի մասին, մինչև որ մարդն ի մի կբերի ասելիքն ու անելիքը, կտա ամեն ինչ՝ ոչինչ չտանելով իր հետ: Երևի դրա համար էլ կատակով ավելացնում էր նաև՝ իսկ եթե Աստծուն մեղմորեն համոզենք, թե մինչև հիմա ինչ արել, արել ես, այսուհետ երկինքը քեզ, երկիրը՝ մեզ:

Հուսանք, որ այդպես կլինի:

Յու. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Ստեփանակերտի պատկերասրահում բացվեց ՀՊՄՀ գեղարվեստական կրթության ֆակուլտետի դասախոսների ստեղծագործությունների ցուցահանդեսը, որին մասնակցեցին Կերպարվեստի և արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի դասախոսները: Ստեփանակերտցի արվեստասերերին էր ներկայացվել 34 ստեղծագործություն, ինչը խորհրդանշում էր 2020 թվականի Արցախյան պատերազմում Մանկավարժական համալսարանի նահատակված ուսանողների թիվը:

Ստեփանակերտի պատկերասրահի հավաքածուն հարստացնելու նպատակով ֆակուլտետի դասախոսներ Արա Հակոբյանը, Լեմս Ներսիսյանը, Արտաշես Քեշիշյանը, Սևադա Սարգսյանը, Սոնա Սագրադովան և Կարեն Երիցյանն իրենց աշխատանքները նվիրեցին պատկերասրահին:

Նաև արվեստի միջոցով պետք է հիշել բոլոր այն հերոս տղաներին, որոնք իրեց կյանքը նվիրաբերեցին հայրենիքին. այսպես են մտածում ու աշխատում մեր համալասարանի նկարիչ-դասախոսները:

ՄԵՐՕՐՅԱ ՀԵՐՈՍԸ.

Հարություն ՄԿՐՏՉՅԱՆ

Պատերազմն ապացուցեց, որ այսօր մենք պաշտանված ենք, քանի որ մեր թիկունքը պաշտպանում են մահվան աչքերին նայող ու պայքարող, հերոսական ոգով մինչև վերջ մարտնչող մերօրյա հերոսները: Նրանցից մեկն է նաև Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի կենսաբանության բաժնի առաջին կուրսի ուսանող Հարությունն Մկրտչյանը, ով պատերազմի օրերին գտնվում էր ժամկետային զինծառայության մեջ :

Հարությունի զորացրմանն ընդամենը հինգ ամիս էր մնացել, երբ սկսվեց պատերազմը… Պատերազմի ողջ ընթացքում նա եղել է Մարտակերտում, Մատաղիսում և «Եղնիկներ» կոչվող զորամասում:

«Պատերազմը մահվան հետ հանդիպում է և հետագա ողջ ընթացքն Աստծո ձեռքերում է... Այդ պահին յուրաքանչյուր մարտիկի միակ ցանկությունը թշնամուց առաջ անցնելն է, քանի որ եթե թշնամին քեզնից առաջ անցնի՝ կհասնի ընկերներիդ, հարազատներիդ և ընտանիքիդ»,-ասում է Հարությունը և հավելում, որ պատերազմի ընթացքում մտածելով անցյալի և ապագայի մասին՝ խորհում ես՝ ի՞նչ չես արել, ի՞նչ չես հասցրել կամ ի՞նչն ես սխալ արել կյանքիդ ընթացքում: Եվ այդ հարցերին պատասխանելով՝ սովորում ես գնահատել կյանքի ցանկացած պահը, հասկանում, որ պետք է օգտվել կյանքի ընձեռած յուրաքանչյուր հնարավորությունից, չվախենալ ռիսկի գործոնից, շատ ժամանակ տրամադրել ընտանիքին և ընկերներին ու ամենակարևորը՝ կարողանալ ի կատար ածել այն երազանքներն ու նպատակները, որոնք, ցավոք, չհասցրին մեր անմահացած ընկերները:

Պատերազմի օրերին Հարությունն անցել է մի շարք փորձությունների միջով և տեսել վատագույնը, սակայն այդ օրերից ունեցած հիշողություններից առանձնացնում է այն դեպքը, երբ անձնակազմով խոցել են հակառակորդի մեկ տանկ. այդ մասին իմացել են օրեր անց և շատ ուրախացել:

Պատերազմն ինչպես բոլորին, այնպես էլ Հարությունին շատ բան սովորեցրեց: Որովհետև երբ մարդ կանգնում է թշնամու առաջ ու նայում մահվան աչքերին՝ սկսում է մտածել: Հիշում է հարազատներին, ընկերներին, նրանց հետ արած խենթություններն ու հասկանում է, որ կյանքում երջանիկ լինելու համար որքան քիչ բան է հարկավոր:

Առաջնորդվելով «Ցանկացած իրավիճակում մարդ մնալ» կարգախոսով, ընկերներին իր կյանքի մի մասնիկը համարելով, հոգում մեծ ուժ ու հավատ, իսկ կողքին հավատարիմ ու անդավաճան մարդկանց առկայության շնորհիվ Հարությունն այսօր շարունակում է իր ուղին:

Իսկ պատերազմը նրան ոչ միայն ցավ ու կորուստներ է տվել, այլև եղել է մեծ փորձություն ու պայքար, որի որի տված դասերը կուղղորդեն ողջ կյանքի ընթացքում...

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ

ԹԵՐԹԵԼՈՎ ԱՆՑՅԱԼԻ ԷՋԵՐԸ

Սահակ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



Ծնվել է 1906 թ. մայիսի16-ին ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր գյուղում:

Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Սահակ Կարապետյանը, ով գիտական հասարակայնությանը հայտնի է որպես առաջատար ֆիզիոլոգ, 1930 թ. ընդունվել և 1933 թ. ավարտել է Անդրֆեդերացիայի անվան (այնուհետև՝ Երևանի) անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտը:

1933 թ. աշխատել է ՀԿԿ Կենտկոմում՝ որպես ագրոտեխնիկական պրոպագանդայի սեկտորի վարիչ: 1933 թ. վերջերին գործուղվել է Սիսիանի շրջան և մինչև 1936 թ. աշխատել է Բազարչայի սովետական տնտեսությունում՝ որպես գլխավոր անասնաբույծ, այնուհետև՝ տնօրեն: Նա աշխատանքին զուգահեռ սովորել է Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտելուց հետո զբաղվել է Հայաստանում գյուղատնտեսական կենդանիների բազմացման և անասնաբուծական գիտության զարգացման գործով:

1938 թ. Ս. Կարապետյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ «Կերերի կենսաքիմիական կազմի, մարսելիության և կենդանիների մի քանի ֆիզիոլոգիական ֆունկցիաների վրա դրոժացման ազդեցությունը» թեմայով, որը մեկ տարի անց հրատարակվում է որպես մենագրություն: Նա բազմաթիվ գիտական աշխատանքների հեղինակ է, և նրա աշխատությունները հիմնականում վերաբերել են գյուղատնտեսական ոլորտին:

1938 թ. Ս. Կարապետյանը նշանակվում է ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի նախագահի գիտական գծով տեղակալ, միաժամանակ աշխատելով նույն մասնաճյուղի Կենսաբանության ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող, իսկ Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում դասավանդում է «Դարվինիզմի հիմունքներ» առարկան: 1940 թ. պրոֆեսոր Կարապետյանը նշանակվում է Հայաստանի Կոմկուսի կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչի տեղակալ:

1952 թ. Ս. Կարապետյանն իր ստեղծագործական կարողություններն ամբողջովին ուղղել է դեպի գիտությունն ու արտադրությունը՝ սկսելով գիտամանկավարժական ու հասարակական գործունեության նոր փուլ:

1952-1955 թթ. եղել է հայկական անասնաբուծության և անասնաբուժության գիտահետազոտական ինստիտուտի տնօրենը: Ս. Կարապետյանն աշխատել է նաև Գիտությունների ակադեմիայի Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում՝ որպես ավագ գիտական աշխատող:

1957-1963 թթ. ակադեմիկոսը համատեղության կարգով դասախոսել է նաև Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (նախկինում՝ ինստիտուտ), իսկ 1964 թ. ղեկավարել է նույն ինստիտուտի ֆիզիոլոգիայի ամբիոնը:

Մասնագիտության հանդեպ ունեցած հետաքրքրության և բարձրարժեք գործունեության համար Ս. Կարապետյանն արժանացել է մի շարք կոչումների՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943 թ.), կենսաբանական գիտությունների դոկտոր (1961 թ.), իսկ մեկ տարի անց՝ պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1966 թ.):

Մեծ ավանդ ներդնելով իր ընտրած մասնագիտության մեջ՝ Ս. Կարապետյանը պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի, Պատվո նշան, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի և Ժողովուրդների բարեկամության շքանշաններով, ինչպես նաև Համամիութենական «Գիտելիք» ընկերության կողմից՝ Վավիլովի անվան մեդալով:

Մահացել է 1987 թ. դեկտեմբերի 6-ին:

Հարկ է նշել, որ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարանի ֆոնդը մշտապես կատարում է համալրման աշխատանքներ: Ֆոնդում շարունակում են տեղ գտնել թե՛ անցյալում և թե՛ արդի փուլում բուհի հետ ճանապարհ անցած մարդկանց մասին տեղեկությունները: Համալրման արդյունքում Ս. Կարապետյանին վերաբերող նյութերից ևս տեղ են գտել թանգարանի ֆոնդում:

ԿԱՄՍԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ



Հայ աշխարհագրագետ, մանկավարժ, գրող Կամսար Ավետիսյանը ծնվել է 1905 թ. մայիսի 2-ին, Արևմտյան Հայաստանի Բագրևանդ գավառի Հին Բայազետ քաղաքում:

Ապագա աշխարհագրագետի կյանքում նշանակալից էր 1915 թվականի աշունը, երբ նա ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Հենց այստեղ էլ ի հայտ են գալիս նրա նախասիրությունները աշխարհագրության բնագառավում: «Աշխարհագրություն» մասնագիտության հանդեպ ունեցած մեծ հետաքրքրությունը ապագա գիտնականին տանում է Երևանի պետական համալսարան: Կ. Ավետիսյանը 1932-1937 թթ. սովորում է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետում, որն ավարտելուց հետո աշխարհագրություն է դասավանդում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում (նախկինում՝ ինստիտուտ):

1947 թ. նա պաշտպանել է թեկնածուական թեզը՝ «Արևմտյան Հայաստանի բնաշխարհը» թեմայով: Նա բազմաթիվ աշխատությունների հեղինակ է, և մեծ է նրա ներդրումը գիտության բնագավառում: Կ. Ավետիսյանն արժանացել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի, 1949 թվականին՝ դոցենտի կոչման:

Գրել է բազմաթիվ գրքեր՝ «Ի՞նչ է պատմում քարտեզը» (1953 թ.), «Արևելքի մարգարիտը» (1964 թ.), «Աշխարհագրական անունների բացատրական բառարան» (1969 թ.), «Երևանի պատմությունը անունների մեջ» (1969 թ.), «Իմաստուն խոսքերի աշխարհում» (1973 թ.) և այլն:

Մահացելէ 1976 թ. հոկտեմբերի 24-ին:

Աշխատելով Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում որպես աշխարհագրության դասախոս աշխատելու տարիների մասին պատմող նյութերից պահպանվում են համալսարանի պատմության թանգարանում:

Կարինե ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
ՀՊՄՀ պատմության թանգարանի գիտաշխատող

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

Ապրիլի 23-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Երևանի կենդանաբանական այգու միջև կնքված պայմանագրի համաձայն անցկացվեց առաջին համատեղ միջոցառումը:

Կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության և նրանց դասավանդման մեթոդիկայի ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ և կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Պիպոյանի աջակցությամբ ֆակուլտետի ուսանողներն այցելեցին կենդանաբանական այգի: Սամվել Պիպոյանը հանդես եկավ «Կենդանաբանական այգիների դերը կենդանիների պահպանության գործում» զեկուցմամբ, իսկ կենդանաբանական այգու աշխատակիցները ներկայացրին այգու ստեղծման և այստեղ խնամվող կենդանիներին պատմությունը:

Միջոցառմանը մասնակցում էին առկա և հեռակա համակարգերում սովորող ուսանողներ և համատեղ այցի ժամանակ նրանց միջև ստեղծվեցին ծանոթություններ, ձևավորվեցին լավ հարաբերություններ, ինչը կարևոր է ուսանողների համար: Ինչպես նաև օրն ունեցավ ուսուցողական մեծ նշանակություն բոլոր մասնակիցների համար: Սեփական աչքերով տեսնելը, կենդանիներին առնչվելը, բնության մեջ լինելը և այդ ամենի արդյունքում ստացած գիտելիքներն անփոխարինելի են յուրաքանչյուր բնագետի համար:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ

Քաղաքի «կողքի» փողոցը

«Փակ է միայն «կողքի» փողոցը»,- լսվում է վարորդի ջղային ձայնը, ու ավտոբուսի դռները փակվում են: Այս օրերին կան մարդիկ, ովքեր աշխատանքի են շտապում: Ուղևորների մտքերն ընդհատվում են միայն ավտոբուսի դռների չխկոցից: Լուռ են բոլորը: Ոչ թե լռում են, այլ մտովի կռիվ տալիս լռության ու իրականության հետ՝ «կողքի» փողոցում կատարվածի, փակ փողոցի ժամանակավոր վրանների մարդկանց մտովի միանալով:

Քաղաքը ոչ սովորական եռուզեռի մեջ է: Ժանանակ առ ժամանակ բացվում ու փակվում է «կողքի» փողոցը, որտեղ այսօր էլ կանգ է առել օդը՝ մարդկանց անշտապ քայլերից, խումբ-խումբ հավաքվածների շուրջը: Ավտոբուսի «մաքուր» ապակուց մի կերպ արևի շողը ներս թափանցեց: Մի ուղևոր երևի նրան էր սպասում, բռնեց օդի փոշու մեջ խեղդվող շողն ու մտքերի սարդոստայն հյուսեց:

Նորից գարուն է գալու, և նորից քաղաքը պիտի վերհիշի իր փողոցներում գարուններից մեկում թափված արյունն ու տխրի, որովհետև Քաղաքը մարդ է, սեռ ունի, բնավորություն, իր զավակներին, իր ներսում ապրողներին պաշտպանելու մեծ ցանկություն: Քարե սիրտը պատասխանատվության ու արժանապատվության մի կծիկ է դառնում հատկապես, երբ փակվում է «կողքի փողոցը»: Նորից գարուն է գալու. այս գարունն աննկատ կանցնի, որովհետև տխուր ու լուռ է Քաղաքը:

Ավտոբուսը հասավ հերթական կանգառ: Դռները բացվելուն պես արևի շողն ուղղակի փախավ ճնշող հայացքներից, դուրս թռավ դեպի հանդիպակաց մայթ: Մի փոքրիկ, մոր ձեռքը թողած, կանգառից քիչ հեռու, խաղում էր թաց ավազի հետ: Շողը միացավ նրան: Փոքրիկ տղան ավելի ուրախացավ, առույգացավ շողը, նրանց ուրախությունից ավազի արցունքը չորացավ: Քարե սիրտը վերջապես ժպտաց, հասկացավ, որ անցողիկ է ամեն բան՝ փակ ու բաց փողոցները, նրանց ներսում ու դրսում գտնվող մարդիկ: Խորը շունչ քաշեց, նրա աչքերում ավազից տնակ սարքող տղան մեծացավ, ամրացրեց իր հոգում փլվող վարդագույն հավատը:

Շողը հասկացավ, որ այլևս անելիք չունի այստեղ, որ փոքրիկն առանց իրեն կշարունակի խաղը ու թռա՜վ: Քաղաքի սրտից փոքրինչ հեռու, կամ հենց սրտի մեջ, մի Բլուր կա՝ Քարե սրտի տխուր օրգաններից մեկը: Շողը թռավ այդտեղի սառնությունը կտրելու և հավաստիացնելու, որ փակ ու բաց փողոցների արանքում մոռացված չեն, որ ամենակարևորն իրենք են և անցյալը վառ պահող այն փոքրիկը, ով ավազից սարքած իր տնակի կտուրին արդեն հասցրել էր ափի մեջ պինդ սեղմած դրոշակը դնել:

Անուշ ԹԱՍԱԼՅԱՆ

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Երիտասարդ բանաստեղծի նոր ժողովածուն

Տեղի ունեցավ ՀՊՄՀ շրջանավարտ, սիրված մտավորական, մասնագիտությամբ բանասեր, ժամանակակից բանաստեղծ Նշան Աբասյանի չորրորդ գրքի շնորհանդեսը:

Նշան Աբասյանը ծնվել է 1985 թվականի հոկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղում: 2007 թվականին ավարտել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Բանասիրական ֆակուլտետը: 2005-2010 թթ. աշխատել է տարբեր հասարակական կազմակերպություններում, խմբագրություններում, ռադիոհեռուստատեսային ծրագրերում:

2020 թ. սեպտեմբերից խմբագիր է աշխատում «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում:

Ապրիլի 30-ին Հայաստանի գրքասեր ու արվեստասեր հասարակության սիրված օջախներից մեկում՝ Հայաստանի Ազգային գրադարանում «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը կազմակերպել էր Նշան Աբասյանի «Պետրիկոր» գրքի շնորհանդեսը, որն այստեղ էր բերել գրականագետների, հրատարակիչների ու ընթերցողների:

Նշան Աբասյանը հայ մշակույթը ներկայացրել է Լեհաստանում, Ռուսաստանում, Գերմանիայում, Դանիայում, Իտալիայում և այլուր: 2012-ին առաջին անգամ Հայաստանը ներկայացրել է Ջենովայի պոեզիայի միջազգային փառատոնին: Հեղինակի առաջին գիրքը «Երեքշաբթի»-ն է, տպագրվել է 2007 թվականին, ապա 2010-ին, տպագրվել է «Ծիրանենի» ժողովածուն, իսկ 2015-ին, «Արմավ» հրատարակչությունը տպագրել է «Ուրիշ լռություն» բանաստեղծությունների ժողովածուն:

Նշան Աբասյանի ստեղծագործությունները թարգմանվել են անգլերեն, ռուսերեն, իտալերեն և ռումիներեն: 2019 թվականին «Ամռանը տանը կլինեմ...» բանաստեղծությունների ժողովածուն թարգմանվել է ֆրանսերեն՝ Իդա Տեր Հարությունյան Սեկկալդիի և Տեր Արամ քահանա Ղազարյանի կողմից: «Պետրիկոր» ժողովածուն լույս է տեսել «Արդի» մատենաշարի շրջանակներում:

Միջոցառմանը բացման և ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի Ազգային գրադարանում հանրային կապերի պատասխանատու Արմինե Վարդանյանը: Նա ներկայացրեց սիրված մտավորականին ու նրա նոր ժողովածուն: Ցուցադրվեց տեսահոլովակ, որտեղ սիրված դերասան Բաբկեն Չոբանյանն ընթերցում էր Նշան Աբասյանի ստեղծագործություններից: Հոլովակի հեղինակն Արտակ Ավետյանն է:

Ելույթ ունեցան գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, Հայաստանի գրողների միության անդամ Արմեն Ավանեսյանը, գրող, արձակագիր, «Էդիթ Պրինտ» հրատարակչության ներկայացուցիչ Դավիթ Սամվելյանը, գրադարանի ընթերցողներից Իրինա Շախյանը կարդաց «Պետրիկոր»-ից մի քանի գործ:

Վերջում կազմակերպիչներին ու ներկաներին ուղղված շնորհակալն ելույթով հանդես եկավ Նշան Աբասյանը. «Ընկերներիս երկար խնդրանքներին տուրք տալով եմ համաձայնել նորից գիրք հրատարակել: Գրականագետներից մեկը մի անգամ ինձ ասաց. «Դու ստեղծում ես քո ուրույն աշխարհն ու ստիպում ընթերցողին տեղափոխվել-բնակվել այնտեղ»:

Հիմա արդեն շատ եմ վախենում դրանից. «Չեմ ուզում՝ այդպես լինի... »:

Խոսելով գրքի վերնագրի մասին՝ նա նշեց, որ ձևավորողն է ընտրել, և դա կենսաբանների ստուգաբանությամբ նշանակում է անձրևից հետո առաջացած բույր:

Հանդիպումն ընթացավ հարց ու պատասխանի և քննարկումների յուրահատուկ գեղեցիկ մթնոլորտում:

Գարիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 12.05.2021 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ